


Դասկանութեան թ.

4053

Մատիսի  
ուսուցչութիւնը




Թիֆլիս  
1881.

Հըստ շաղ. «Կովկ. Գրավածառանցի» Զ. Գրեգորեանցի:

Topic 10

## ԳՐԱԴԱ-ՔԱՐՏՎԱՆ

Գիւն է 20 կոպէկ.



2003

Տ Փ Խ Ի Ա  
Են Յ. Մարտիրոսեանցի.  
**1881**

891.995

Դ-29

56

Հրատարակութիւն «Կոմի. Գրականուանոցի» Զ. Գրեղորեանցի.

ՄԱՆԿԱԿԱՆ ՈՏԱՆԱԿՈՐՆԵՐ  
ԵԽ ԵՐԳԵՐ

Խմբագրեց

1001  
3415

**ԳԱՄԱՌ-ՖԱԹԻՊԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԻՃԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ  
ԲԻBLIOTEC

1922

ՏՓԽԻՍ

Ի տպարանի Յ. Մարտիրոսեանց

1881

5941

1881 1881 1881 1881  
1881 1881 1881 1881

Дозволено Цензурою. Тифлисъ, 2 Марта 1881 г.

ГУРЧЕЛДА-ОВИЛФ

Типографія И. Мартirosianца, на Орб. ул. д. № 5.

Ա. Փ. (\*)

(Ժողովրդական)

Ծափի՛, ծափի՛ ծիրանի՛,  
Հովը թել թել կը տանի . . . .

(\*) Մայթը բանում է երեխայի ձեռնիկները ու երար խը-  
փում է, ասելով այս երգը, ոքն գուցէ աւելի երկար լինէր,  
բայց ես միայն այսքանն եմ լսել:

2

(Ճողովրդական)

Եղեկ—մեղեկ (\*),  
Զըւաձեղեկ,  
Բերանն ՚ի վար  
Կըւ կըւ կըւ կըւ:



3

Ճիւ—ճիւ (\*\*)

(Ճողովրդական)

Ճիւ—ճիւ մատնցիկ,  
Կանանչ խառնան բանեցինք,

(\*) Մայթը մատուլ գիտչում է ծծկեր երեխի շրբթունք-  
ներուն և յետոյ խտըում է միզր:

(\*\*) Մայթը բոնում է ծծկեր երեխայի ձեռքի կաշին,  
վեր վեր բարձրացնելով ասում է:

Իրիցկինին կերցուցինք,  
Իրիցկինը չի կերաւ  
Պարոնին բաղչան թըւըւ—ռաւ:




4

Մօր Երգը (\*)

(Ճողովրդական)

Յետիդ խըփեմ՝ հաստանաս,  
Սէկ ծառի չափ բարձրանաս,  
Սարերին տոտիկ կանես,  
Ծառերին մոտիկ կանես:



(\*) Մայթը ծծի երեխին վեր ու վեր բարձրացնելով և  
ամէն անգամ յետնէն խիելով ասում է: «Յետիկ տեղ ժողո-

5

## Կ Ծ Ա Խ Ն Կ Ն Ե Ր (\*)

(Գողովրդական)

Կըռան—կըռան—կրկըռան,  
կըռունկները հա թըռան,  
կըռունկների թեփ տակ  
Եկաւ ամառն մեր դրան:

վաւըգը մի ուրիշ խօսք է գործածում, որ տպի համար անյար-մար է:

(\*) Գարենանամուտին կըսունկների առաջին անգամ թըսւ-  
չելը տեսնելով, երեսայք ասում են այս ոտանառորդը, երգածը  
լսած. «Եմ:

**6** ԿՈՏՈՒ  
ԿՈՏՈՒ

Կատուն եկաւ փիսիկ—փիսիկ,  
Հազար նազով ինչպէս հարսիկ,  
Գունչը սրբեց թաթիկներով,  
Մազը սանդղեց չանչիկներով.  
Կատու, կատու հէր ես տրտում,  
Թէ՛ միներն են այս օր զարթուն:

—  
—  
—

፩ በ ተ ክ

Բաղիկ—բաղիկ,  
Կարմիր թաթիկ.

Զագուկներիդ չորս կողմը առած:  
— Ես գնում եմ ջուր, գտնելու,  
Զագուկներիս լըւանալու.  
Զագուկներըս մաքուր—մաքուր  
Տղոց երեսն ազտ է ու մուր:

**8**  
Գ Ա Ր Ո Ւ Ն

Արի, գարուն,  
Արի, սիրուն,  
Բեր պարզ արև,  
Առատ անձրև  
Խնդրէ Տէրէն  
Հաճար, ցորեն,  
Զըմեռն էր մեծ  
Ողջ ըսպառեց,

Ամբար, մառան  
Գատարկ դառան:

**9**

Ա Ր Ե Ւ

Արև, արև արի դուս,  
Քեզ բերել ենք աչքի—լուս,—  
Քու քուրիկը լուսինկան  
Բերեց չամիչ մեկ աման,  
Ամպը եկաւ, մութ արաւ,  
Զամիչն աչքերէս կորաւ.  
Բաց երեսըդ, արեգակ,  
Մէկ բուռ չամիչ քեզ կուտանք....  
Օ՝ ի, արեխն խարեցինք  
Ամպի տակէն հանեցինք:

**10**

**10**

Ծ Ա Յ Լ.

Մինչեւ յօրձակ \* քուն ելար,  
 Քընէտ ելար՝ հաց կերար,  
 Հաց կերար ու կըշտացար,  
 Կըշտացար ու պառկեցար,  
 Այսպէս տարիներ կեցար....  
 Ցետոյ ի՞նչու դանգատ կանես,  
 Որ ապրուսոի ձար չունես:

**11**

Զ Ի Ւ Ն

«Ալս, ի՞նչու—ի՞նչու կուգայ պաղ ձիւնը  
 Նորից ամիսներ պիտ մընամ տունը,

\*.) Յօրձակ, կըձատուած օր արձակ, կէս օր, միջօր է,—  
 midi, ոլձենք.—

Տեսնելու չեմ ես կանանչ ծառ, արօտ,  
 Հոտոտ ծաղկեն պիտ մընամ կարօտ:»  
 — Զիւնը որ կուգայ երկնքեն 'ի վար,  
 Իմացիր, մեծ բաղդ է մարդուս համար,  
 Վերմակի պէս տաք կը ծածկէ գետին,  
 Որ բայսի արմատն զիմանայ ցրտին:  
 Նա հողին կուտայ հիւթ, պարարտութիւն,  
 Դաշտին ու արտին մեծ առատութիւն:  
 Մի տրանջալ մարդ, դու բընութենէն,  
 Թէ տաք և թէ ցուրտ՝ մեզ միշտ օգուտ են:

**12**

ԴԱՏԱՐԿ ՀԵՏԱՔՐԲՐՈՒԹԻՒՆ

«Զեռքըդ ինչ բընած՝ կը տանես դու:»—Վարդ:  
 «Վարդ չէ, այդ խոս է. սըտեցիր, ո՛վ մարդ:»

— Թէ խոտը վարդէն կը զանազանես.  
Ինչո՞ւ ի զուր տեղ հարց ու փորձ կանես: —

13

ՄԱՆԻՇԱԿ

Դեռ ուրէ ծիծեռ, գեռ ուրէ սոխակ,  
Գարնան կարապետ եկաւ մանիշակ.  
Երկնային խունկը չորս կողմը բուրեց,  
Նորածին աշխարհ նախ նա համբուրեց:

\* \*

Երկինքն է անամպ, շողշողուն արե,  
Տանք մանիշակին, երեխերք, բարե,  
Որ մեր դաշտերին բերեց նոր գարուն:  
Նախշուն հաւերով, ծաղկով զարդարուն:

14  
ՏԽՈՒԻ ԵՐԵԽԱՅ

Երբոր ծագեցաւ պայծառ արեգակ,  
Աքլար, աղաւնի, հաւ ու ծիծեռնակ,  
Զի, ոչխար, գառնուկ, այծ, ուլ, հորթ ու կով  
Կնացին իրանց գործին լշտապով:

\* \*

Միայն ծոյլ տրղան չի գնաց դըպրոց,  
Գիրքը շըպրտեց ու փախաւ փողոց.  
Իրիկուն ամենքն յետ դարձան ուրախ,  
Միայն տրղան էր տրտում, զլսակախ:

—————

15

ԺՐԱԶԱՆ ՏՂԱՅ:

Տըղան սիրումէ ձեղ շատ, արեգակ,  
Դաշտ ու պարտէզում ճըռվըռող թռչնակ,

Ճիւղերից կախ—կախ պտուղներ հասուն,  
Բայց ձեզնից աւել պիտ՝ սիրէ ուսում:

\* \*

Ուրեմն թողէք, նախ դպրոց երթայ,  
Հնկերների հետ դասերը նա տայ,  
Եւ երբոր իւր սուրբ պարտքը կատարէ,  
Որքան որ ուղէ թո՞յ նա ձեզ սիրէ:

\* \*

Այնուշետև ցոլա, պայծառ արեգակ,  
Այնուշետև երգէ. . . դու նախշուն թո՞նակ,  
Ու անուշ համը հասուն պըտուղին  
Թողլլնի վարկը, ժըրաջան արզին:



## 16

ԵՐԿՈՒ ՈՒ ՄԻ

Ականջդ երկու, ունիս մի բերան  
Հասկացիր դու լսւ,

Աշխարքիս վըրայ կը լսսես շատ բան,  
Ու խօսէ սակաւ:

\* \*

Աչքերդ երկու, ունիս մի բերան,  
Հասկացիր, դու լսւ,

Աշխարհիս վըրայ կը տեսնես շատ բան,  
Ու պատմէ սակաւ:

\* \*

Երկու ձեռք ու մի բերան դու ունիս,  
Հասկացիր ինձ լսւ,

Օրնիբուն ու շատ պիտի աշխատիս,  
Եւ ուտես սակաւ:



## 17

Վ. Ա. Ն Ի Զ Կ Ա.

Վանիչկային շատ են գովում,  
Որ լսւ աշակերտէ նա,

Որ ֆրանսերէն վարժ է խօսում,  
Ճանաչում է Եւրոպա:

\* \*

Բայց մայր լեզու հայերէնի  
Մէջը մունջ է ու տրգէտ,  
Չի ճանաչում Հայաստանի  
Ոչ մի քաղաք, ոչ մի գետ . . .

\* \*

Ո՛չ մարդ, կըկու է քու Վանեան,  
Որ սեպհական չունի բուն.  
Թութակ է քու գոված տրղան,  
Որ չը գիտէ իւր լեզուն:

—————

## 18

Գ. Ա. Ի. թ.

Երեխի փորը շատ էր, շատ քաղցած,  
Հայրը շուկայից չէր վերադարձած,

Հայրը հինգ րոպէ էլի ուշացաւ,  
Երեխի քաղցը աւել աստիացաւ:  
Հայրը շուկայում կէս ժամ որ մնաց,  
Երեխին գըտաւ սովէն թալկացած . . .  
Ապա ի՞նչ անեն խեղճ տղայք Վանում,  
Որ ամիսներով քաղցած են մընում . . .  
Որ տեսնես, տըղայ դու հացի երես,  
Վանի եղբարքդ միշտ միարդ բերես:

—————

19

ԹՌԶՈՒՆԻ ԶԱԴ

Անկողնիկի մէջ անմեղ երեխան,  
Նիրհում է խաղաղ հրեշտակի նըման,  
Խոկ նորա մայրը մօտի սենեակում  
Երեխի համար խաւիծ էր եփում:  
Երդիկէն յանկարծ գայլը ներս թըռաւ,  
Տըղի անկողնին կատած մօտեցաւ.



Երեխերք՝ ի՞նչու այդպէս սարսեցաք,  
Թռունի համար գուք չէք դայլ անյագ,  
Ինչպէս չար գայլը խեղճ մօր զաւակին:

20

ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ

Արի իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,  
Տաղերով քուն բեր տրղիս աշերին.  
Բայց նա լալիս է, գու սոխակ մի՛ գալ,  
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

\* \*

Եկ, աբեղաձագ, թող արտ ու արօտ,  
Օրորէ տրղիս, քընի է կարօտ.  
Բայց նա լալիս է, գու ձագուկ մի գալ,  
Իմ որդին չուզէ աբեղայ դառնալ:

\* \*

Թող գու, տատրակիկ, քու ձագն ու բունը,  
Վուվույով.. տրղիս.. բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է, տատրակիկ, մի՛ գալ.  
Իմ որդին չուզէ սրգաւոր դառնալ:

\* \*

Կաչաղակ ձարպիկ, գող, արծաթասէր,  
Նահի զրուցով որդուս քունը բեր:  
Բայց նա լալիս է, կաչաղակ մի՛ գալ  
Իմ որդին չուզէ սովորագար դառնալ:

\* \*

Թող որսը, արի, քաջասիրտ բաղէ,  
Քու երգը գուցէ իմ որդին կուզէ,  
Բազէն, որ եկաւ, որդիս լուեցաւ,  
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ:

\*\*\*

**21**

ԻՍԿԱԿԱՆ ԲԱՂԴ:

Մի օր փոքրիկ տրղան ասաց.

— Ի՞նչպէս կուզեմ ես, մայրիկ,

Մըսքիս մէջը կարծածիս պէս

Լինել արդայ երջանիկ:—

Ծիծաղելով ասաց մայրը,

«Որդեակ՝ ի՞նչ է քեզ պակաս,

«Աշխարքումըս կայ այնպէս բան,

«Որն օր գու չունենաս:

\*  
\* \*

«Հայր ու մայրըդ գլխուդ վըրան,

«Հալաւըդ տաք ու մաքուր,

«Փափուկ կողէնք, մեծ բնակարան,

«Առատ, անուշ կերակուր:

\*  
\* \*

«Նայէ շուրջըդ, սիրուն որդի,  
«Շատ մարդ ունի քեզ չափ բան,  
«Գու չը գիտես, որքան ազքատ  
«Տկլոր, քաղցած որբեր կան:»

\* \* \*

— Հենց այդէ որ, քնքոյշ մայրիկ,  
Ինձ չէ տակիս ուրախ օր,  
Որ իմ շուրջը ամեն արդայ  
Ինձ նրման չէ բաղտաւոր:—

—————

—————

—————

—————

—————

—————

—————

—————

ԶՈՐՍ ԵՂԲԱՐՔ

Զորս եղբարք են. ամեն տարի  
Երկրիս վըրան ման են գալի.  
Զորմն էլ ջոկ—ջոկ ունին հասակ.  
Պարզեներն են հաղար տեսակ:

\*  
\* \*

Առաջինն է պատանի,  
Բողբոջ տերեւ, սաղարթ ունի,  
Պայծառ տերեւ, կանանց արօտ.  
Որոնց տըղաք են միշտ կարօտ:

\*  
\*\*

Երկրորդ եղբայրն երիտասարդ  
Տալիս է մեզ անձրեւ առատ,  
Ծաղկունք ցանում է ամեն դի,  
Ցոյս տալիս է առատ հընձի:

\*  
\*\*

Երրորդ եղբայրն այր չափահաս,  
Մրգերովլի ունի մի թաս,  
Բաժանում է տըղոց իւր գանձ—  
Ծիրան, խնձոր, խաղող ու տանձ:

\*  
\*\*

Չորրորդ եղբայրն է ծերունի,  
Ցուրտ ու խաւար շալկած ունի,

Այգի անտառ ամայացաց,  
Դաշտ և արօտ ձիւնով լքցուց:  
\* \* \*  
Գիտեն արդեօք հայ տղերքը  
Որոնք են այս չորս եղբարքը,  
Եղանակներն են սոքա մեր  
Գարուն, ամառ, աշուն, ձմեռ:

### 23

Խ Ր Ա Տ

Ուրախ լեռ երիտասարդ՝ ի ման-  
կութեան քում. Ժողով. Ժա. 9.

Տղայ՝ եղի՛ր գու ուրախ ու բարի,  
Ժամ ու օրերդ կանցնին հանաքով,  
Ճամփադ չի լինիւ բըսած տատասկով,  
Ամեն քու իղձրդ շուտ կը կատարի:

\*  
\*\*

Տըղայ՝ եղի՛ր դու ուրախ ու բարի,  
Քիշող կերևի քեզ միշտ ու միշտ շատ,  
Հընոտից ել քիչ կերևի ձոխ զարդ,  
Ամեն կարիքը շուտ կը կատարի:

\* \*

Տըղայ՝ եղի՛ր դու ուրախ ու բարի,  
Քթժուար չերեիլ քեզ աշխատանքը,  
Զի տանջիլ կեանքի քեզ տառապանքը  
Սրտիդ բաղձանքը շուտ կը կատարի:

\* \*

Տղայ՝ եղի՛ր դու ուրախ և բարի,  
Լքքած չես մընալ դու այս աշխարհում,  
Շնորհներ շատ կան Աստուծոյ ձեռքում,  
Քու ջերմ աղօթքը շուտ կը կատարի:

— աստիճան —

24

ԳՏԵ՞Ք ՄԽԱԼՆԵՐԸ

**Ա.**

Չըմեռ էր, տըղերք եղան հալումաշ,  
Գնացին դաշտ, տեսան բըսած, լաւաշ,  
Տափը ծաղկալից, օրը տաք, հեղձուկ,  
Տառերից կախ-կախ սեխս բողկ, ձըմերուկ:

— աստիճան —

**Բ.**

Օձը վազում է մեծ-մեծ քայլերով,  
Ուղոը թռչում է ամպի տակերով,

Զկները տաղեր են կըլկըլացնում,  
Խուլ ու կոյլերին են զըւարձացնում:

**Պ.**

Բարակ ճիւղի վրայ արջը շինեց բուն,  
Մէջը ձու ածեց, թխսել էր ուզում,  
Ղըւղըւան ագուան նոյն ծառի տակին  
Ծիծ էր տալիս իւր գեղեցիկ ձագին:

**Պ.**

Երեսունն է փետրվարի—  
Արև ծագեց հիւսիսին,

Ծծկեր տըղայ, վաղվագ արի՝,  
Հալլա քաղենք պարտէզէն:

**Ե.**

Փիւնիկի թևէն գրիչ փետեցի,  
Առի արարի երեսէն թանաք.  
Զիւնապատ դաշտէն մի թերթ կըտրեցի,  
Ու պապուս պապին գըրեցի նամակ:

**Զ.**

Հայկ ու նապօլէօն մի գոօշի համար  
Սաստիկ կոշտ խօսքեր ասացին իրար.  
Հայկն ունէր հրացան, նապօլէօնն աղեղ.  
Ո՞վ յաղթեց: Անշուշտ մեր Հայկը ահեղ:

25

Ճ Ա. Պ

«Մայրիկ՝ ասա՛, ի՞նչու հայրըս  
նրբ լըրագիր է կարդում,  
Զեռքը ծոցին, ամբողջ օրը  
Գլաքարշ է ու տրտում:»  
—Էնտուր համար նա տրտում է,  
Որ լըրագրի մէջը միշտ  
Նըկարած է խեղճ հայ—ազդի  
Անբաղդութիւն, ցաւ ու վիշտ:—

\* \*

«Մայրիկ՝ ի՞նչու ազգերի մէջ  
Միայն մեր Հայն է թշուառ.  
Միթէ ոչոք գեռ գըտած չէ  
Նորա ցաւին հըզօր ճար:»

\* \*

«ԱՌև, կայ, որդեակ, Հայի ցաւին  
Հըզօր ճար ու փրկութիւն.  
Ու այդ հըզօր ճարի անունն  
Է երր սեր, զուգութիւն:—

\* \*

Մօրը դէմքին նկարուեցաւ  
Աղէտք, թախիծ, տրտմութիւն,  
Աչքը երկինք, աղօթում էր  
Տըղան ազգիս զուգութիւն:

— աստի —

26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՂԸ

Աստղերը պէծ—պէծ վերեն են փայլում  
Նման տըլայոց ցոլուն աչերուն.  
Մի սիրուն աստղիկ կայ երկնից վըրան—

Գիտեմ, այն ասողը որին է նման;  
Մեր դպրոցումը կայ խելօք արզայ,  
Դասերը միշտ լաւ սովորում է նա,  
Հըլու աշկերտ է, ժիր ամեն բանին.—  
Նա կլնի ասողը մեր հայաստանին:

27

Յ Ա Յ Ս

Թող փրչէ քամին պինդ պինդ երեսիս,  
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ.  
Որքան որ կուզէ՝ թող փրչէ հիւսիս,  
Յուսով եմ՝ վաղ—ուշ գարունը պիտ գայ:

\*

Թուխաղը թող պատէ երկինքը պայծառ,  
Թանձը մառախուղ երկիր թող փակէ,

Տարերք աշխարհիս խառնըւին իրար,  
Յուսով եմ՝ վաղ—ուշ արև պիտ ծագէ:  
\* \* \*

Թող գայ փորձութիւն, թող գայ հալածանք,  
Խաւար թող գառնայ անաղօտ լոյսը,  
Սարսափելի չեն Հային տառապանք,—  
Սիան . . . չի հատնէր խղճուկի յոյսը:

28

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն.

Ես մի բան գիտեմ շատ խելօք է նա,  
Գիտէ կրօն աւել քան ըզքահանայ.  
Գիտէ նա երկինք, երկիր, ծով անհուն  
Աւել քան տասն մարդիկ իմաստուն:

\*

Աշխարքիս մէջի կենդանեաց անուանք—  
Տունկի, սողունքի—գիտէ նա բերանք,  
Զըրերու կաթիլ ու աւազ ծովուն  
Կըհամբէ նա քեզ ճիշդ մի բոպէում. . .  
Խելքդ շատ մի մաշել— այս բանի անունն  
Ասում են մարդիկ ուսում— գիտութիւն:



4053

ԶԱՔ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ «ԿՈՎԿԱՍՅՈՒ»  
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄՆԻ ՄԻՋԻ ԱՅԼՈՇԱԾԱՌՎՈՒՄԵՆ

1	Դամառ. Քամթիպա - Մանկական երգար. կազմ.	— 25	
2	—	— անկազմ.	— 15
3	—	Ազատ երգեր.	— 5
4	Նըղնկեանց - Մանկական երգարան.	— 20	
5	—	Չայնադրեալ երգարան.	— 40
6	—	Դասագիրք Չայնագրութեան.	— 30
7	—	Խմբական Չայնագրեալ ազգային երգեր, կազմուած	— 50
8	Միանսարեանց - Քնար Հայկական.	— 1 ռ. 30	
9	Մուզայք Հայաստանի.	— 50	
10	Գուլամիրեանց - Նոր տաղարան.	— 30	
11	Մեծատունեանց - Երգարան աղջկանց.	— 1 ռ.	
12	Մադաթեանց - Փնջիկ.	— 30	
13	Ֆրէշուն - Տաւիդ Բիսնազի.	— 30	

Օստար քաղաքացիք թէ այս և թէ ուսիւ գոքերի  
համար կարող են դիմել հետեւեալ հասցէով Յէ ր.  
Տիֆլիս. Յէ Կավաչք. Կուշի. Տորգօնյու Յ. Ի. Գրի-  
կորովա.

0008294

12013



